ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ՁԱՅՆԸ

Երեմ Երջանիկի Խաչատրյան

Ծնվել է 1953թ դեկտեմբերի 2-ին՝ Երևանում: Ավարտել է թիվ 47 միջ. դպրոցը: Կապավոր:

- Մանկության ձեր երազանքը ո՞րն է եղել:
- Մանկուց երազել եմ դառնալ հետախույզ: Սովորել եմ այնքան, ինչքան ցանկացել եմ - բավարարել է ինձ: Շատ չար եմ եղել, այսօրվա պես հիշում եմ: Բայց կար մի առարկա, դա հայոց պատմությունն էր, որը շատ եմ սիրել: Այ դա՛ սովորել եմ:
- Ի՞նչը կապեց Ձեզ ՀԱԲ-ի հետ:
- Քանի որ կապավոր էի, մասնագիտության բերումով սպասարկում էի նաև ՀԱԲ-ի հեռախոսները և ինչու՞ չէ, տեսնելով ՀԱԲ-ի ազգանվեր գործունեությունն անդամագրվեցի նրա շարքերը՝ 1989թ-ին /աշնանը/: 1990թ-ի օգոստոսի դեպքերից հետո մտա «Տիգրան Մեծ» աշխարհազորայինի շարքերը, մինչև 1992թ-ի հունվարը, որպես շարքային զինվոր:
- Ձեր մարտական ուղին կարո՞ղ եք համառոտակի ներկայացնել:
- Իհարկե՛: Մասնակցել եմ Շահումյանի շրջանի երքեջ գյուղի ինքնապաշտպանական մարտերին՝ «Տիգրան Մեծ»-ի շտաբի պետ Տիգրան Սարգսյանի ղեկավարությամբ:
- Մինչև ազատամարտի ավարտը «Տիգրան Մեծ»-ի հե՞տ եք եղել:
- Ո՛չ: 1992թ. հունվար ամսից մտել եմ «Արամո» ջոկատի շարքերը, որպես թիկունքի մատակարարող: Երբ 1992թ. հոկտեմբերին կազմավորվեց Արծիվ-3 «Արամո-114» գումարտակը, այնտեղ նշանակվեցի գումարտակի թիկունքի պետ և նրա շարքերում մասնակցեցի Լաչինի շրջանի Ղոչազ գյուղի մարտական գործողություններին, որտեղ և վիրավորվել եմ...
- Այսօր ունե՞ք ձեր աշխատանքը:
- Իհարկե՛ ունեմ, աշխատում եմ ՀՀՈ ՊՊԾ 4-րդ ռազմականացված ջոկատում, որպես հրաձիգ:
- Հանգի՞ստ է ձեր խիղճը:
- Իհարկե՛, ես իմ պարտքը կատարել եմ, առանց որևէ շահադիտական խտրականության, բայց այսօր անտեսված եմ, ինչպես իմ ընկերները: Բարոյական առումով ճնշում են մեզ, որ մեր սերունդներին փոխանցելու ոչինչ չունենանք: Հազարավոր տարիներ անցնելուց հետո առաջին հաղթանակը տարանք, հողեր ազատագրեցինք, բայց որպես հայ պարտվեցինք մեր հայրենիքում:

Խոնարհվում եմ. մեր հավերժ գլխավոր հրամանատար՝ Ռազմիկ Վասիլյանի, ՀԱԲ-ականների, ազատամարտիկների շիրիմներին և շնորհակալություն եմ հայտնում բոլոր կռված տղաներին:
Խոնարհվում եմ զոհված ազատամարտիկների ծնողների, կանանց և երեխաների առաջ:
Մեր երկրին ցանկանում եմ երջանիկ ապագա և խաղաղություն:
Ո՛Վ մարդ, սիրի՛ր դիմացինիդ, ինչպես քե՛զ կսիրես և գնահատի՛ր նրան: